ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

Ի պատասխան Ձեր 03.12.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում գտնվող այգիների խաղահրապարակների և մարզական սարքավորումների պահպանման պատասխանատվությունը պատկանում է վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ համապատասխան աշխատակիցների կողմից պարբերաբար՝ ամենօրյա ընթացակարգով, իրականացվում են ստուգումներ, գույքագրման արդյունքում վերանորոգման և հետագա շահագործման ենթակա գույքը սեղմ ժամկետներում վերանորոգվում են՝ առկա ծրագրերի շրջանակներում, իսկ շարքից դուրս եկածները գույքագրվում և տեղափոխվում են վարչական շրջաններում գտնվող պահեստային տարածքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ